



0084 Հայաստան, Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 010 72 00 10: Ֆաքս 010 72 01 21

0084 Armenia, Z. Andranik st.1, Yerevan
Tel: 010 72 00 10: Fax: 010 72 01 21

МИНИСТЕРСТВО ЭНЕРГЕТИЧЕСКИХ ИНФРАСТРУКТУР
И ПРИРОДНЫХ РЕСУРСОВ РА
ЗАО “ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ”
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР

0084, Армения, Ереван, ул.Зор. Андраника 1
Тел: 010 72 00 10: Факс 010 72 01 21
E-mail: hven@hven.am, www.hven.am

No. 44-1
22 / 05 — 2019թ.

Հ Ր Ա Մ Ա Ն

«ԲԱՐՁՐԱՎՈՆՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ»
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/17»
ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության
կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի
7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «գ» պարբերությունների և 26-րդ կետի
պահանջները, ինչպես նաև ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների
մասին» Հայաստանի Հանրապետություն օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ կետի «թ»
ենթակետի պահանջներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության
(այսուհետ՝ Ընկերություն) կարիքների համար «ծրագրային ապահովման
սպասարկման» ծառայությունների (DataWare ծրագրի գնման և էլեկտրոնային
փոստի ծառայության սերվերի սպասարկման) ձեռքբերման նպատակով ստեղծել
«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/17» ծածկագրով գնահատող հանձնաժողով (այսուհետ՝
Հանձնաժողով)՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովի քարտուղար նշանակել Ընկերության մատակարարման
բաժնի մասնագետ Դ.Գասպարյանին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել
Ընկերության ֆինանսատնտեսագիտական, մատակարարման հարցերով տնօրենի
վրա:


ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված

«Բարձրավիճակ էլեկտրացանցեր»
փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի
2019 թվականի մայիսի 22 N 44-չ հրամանի

«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/17» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

- Դ.Գրիգորյան - «Բարձրավիճակ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության վարչական տնօրենի (հանձնաժողովի նախագահ (ԳՊ/ԳԱՊ))
- Հ.Գրիգորյան - «Բարձրավիճակ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության ընդհանուր բաժնի ցանցային գլխավոր ադմինիստրատոր (ԳՊ/ԳԱ)
- Գ.Սեդրակյան - «Բարձրավիճակ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության ընդհանուր բաժնի ծրագրավորող (ԳՊ/ԳԱ)
- Հ.Մխիթարյան - «Բարձրավիճակ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության մատակարարման բաժնի ապրանքագետ (ԳՊ/ԲԱ)
- Հ.Օհանյան - «Բարձրավիճակ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության մատակարարման բաժնի մասնագետ (ԳՊ/ԲԱ)



ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ